ուխտատեղւոյ ուխտաւորաց սենեակներն (այժմ աւերակ), որը յուսով եմ թէ այժմեան Լալայեանք չեն խնայել նորոգելու և իրենց նախնեաց յիշատակն անմահացնելու։ Այս մասին տես իւր տեղումն։

Քարքանջի բնակչաց և տեղւոյն մասին Դանիէլ Ընքեպիսկոպոս երբեմն (1864—1868,) Առաջնորդն Զամախւոյ այսպէս ասէ. (Արարատ ամսագիր։ 1870. նոյեմ. յերես 230)։

‘‘1865ի օգոստոսին՝ հասանք Քարքանջ գիւղն, բնակիչք տեղւոյն ընկալան զիս շատ սիրով ու քաղցրութիւնով[1]։

‘‘Նոքա եկեղեցական դասքով մի վերստ հեռաւորութեամբ գիւղից ընդառաջեցին ինձ, և տարին եկեղեցին, ուր հաւաքուած էին ժողովրդոց բազմութիւն, յետ պատշաճաւոր օրհնութիւն մատուցանելոյ իմ՝ նոցա դիմեցի ի պատրաստեալ ինձ բնակարանն ի տուն պ. Յարութիւնի իւզբաշուն (Դօստեանց)։

‘‘Սոքա առաջին անձինքն են Քարքանջու և շատ հիւրասէր բնաւորութիւն ունին, և քաղաքական կեանք են վարում։ Ամսոյս 5ին եղի այցելութիւն եկեղեցւոյ տեղւոյն, որ Զամախեցի Մարգարայ Լազրովի արդեամբն է շինուած՝ գմբէթաւոր չորից սեանց վրայ։ Այս եկեղեցին չունենալով իրան շրջապատում պարիսպ, շատ անշուք էր երեւում։

‘‘Ուստի կանչեցի ինձ մօտ ժողովուրդն՝ և յորդորեցի, որ յանձն առնեն և եկեղեցւոյ շրջապատումն պարիսպ շինեն, և մի փոքրիկ ծխական ուսումնարան շինեն։ Փառք Աստուծոյ այս օրհնեալ ժողովուրդն[2]) իմ խրատին անսալով՝ իւրաքանչիւր մարդ սկսաւ ցոյց տալ իրան հաւանութիւնը, մանաւանդ ուսումնարանի համար, այստեղ բացուեց ստորագրութիւն, շատերն գրուեցան դրամ, շատերն խոստացան քար բերել, և շատերն

[1])Քարքանջեցիք 1888 թուի սեպտ. ինձ ևս ընդունեցին շատ սիրով և պաշտօնական բոլոր արարողութիւնները կատարելով. բայց սիրոյ առարկայն ուրիշի տուած լինելոյ պատճառաւ . . խօսքներս կարճ եղաւ, մեզ մնաց եկեղեցին։

[2])Այս օրհնեալ ժողովուրդը դեռ 1895 թիւը չէր շինել՝ եկեղեցւոյ պարիսպը, և խոստանում էր շինել, բայց մեղքը Տէրտէրի և տանուտէրի վրայ էր երեւում։